

Յօդ. Ը.— Ի տանէն հայոց իւրաքանչիւր տարւոյ մի անգամ ընծայեցուցեալ լինի կայսեր ռուսաց ի նշան հնազանդութեան քսան մսխալ զուտ սոկի, երեք ձի եւ վեց խոյ:

Յօդ. Թ.— Տունն Հայոց ծանիցէ զկայսերութիւն ռուսաց զիւր ազատիչ ի գերութենէ, կալով մնացէ բարեկամ ընդ բարեկամս եւ թշնամի ընդ թշնամիս կայսեր եւ մեծ կայսրն սիրեսցէ զբարեկամս եւ ատեսցէ զթշնամիս հայոց:

Յօդ. Ժ.— Եթէ հրաման ի կայսերութեան ելանէ ընդունել ի տանէն հայոց զգլխուորս, տունն հայոց պարտական լիցի տալ մինչեւ ցճ, 000 զօրս եւ միեւնոյն կերպիւ ստանալ ծախս նոցա ի կայսերութենէ ռուսաց, որպէս կայսերութիւնն ի հայոց, զիարդ ի վերն հինգերորդ պայմանին դրեալ է:

Յօդ. ԺԳ. Ընդարձակապէս մտցեն եւ ելցեն ամենայն արհեստաւորք եւ վաճառականք յաշխարհէ ռուսաց, որեւիցէ ամենայն ձեռագործք, աշխարհին հայոց հատուցանելով զհարկն, զմաքան եւ ըստ սովորութեան եւ կերպի կառավարութեան ազգին հայոց. նմանապէս եւ հայք մտցեն եւ ելցեն աներկիւղ եւ անկասկած յաշխարհ ռուսաց եւ ինչ եւ իցէ ձեռագործք, հատուցանելով զհարկն, զմաքան եւ ըստ սովորութեան եւ կերպի կառավարութեան ազգին ռուսաց:

Յօդ. ԺԵ. Տունն Հայոց կառավարեսցէ զազդ իւր եւ զաշխարհն ըստ օրինի հայոց:

Յօդ. ԺԶ.— Կայսերութիւն ռուսաց ծանիցէ գտունն հայոց իբրեւ զթագաւոր Հայաստանեայց եւ որոց զգեսպան մեծ բերան հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ:

Յօդ. ԺԷ.— Որովհետեւ երկրակցութիւնք եւ ազգաբնակութիւնք հայոց, աղուանից եւ վըրաց ի հնոյ ժամանակէ իբրեւ զմի են, որ եւ այժմոյս սիրելի են միմեանց, վասն որոյ ի հարկաւոր ժամանակի տալով հայոց 6000 զօրս ռուսաց, ունիցին եւս ազատութիւն օգնական լինելոյ աղուանից եւ վրաց, որքան կարող լինիցին:

Յօդ. ԺԸ.— Վասն հատուցումն լինելոյ գտարեկան ծախուց 6000 զօրաց կայսեր՝ դրաւ լիցի չորս ի տասն մասնէ բոլոր եկամտից Հայաստան աշխարհին. այսպէս տանէն՝ զչորս

մասն Հայրապետին Հայոց վասն ծախուց կրօնաւորաց, տնանկաց, աղքատաց եւ նորոգութեան վանօրէից եւ այլոց պիտոյից. իսկ մասն գանձարանին ընդհանուր տանն հայոց:

Յօդ. ԺԹ.— Հատուցմունք պարտին լինել ի չորս եղանակս տարւոյն, այսինքն նախ ի Մարտի 20-երորդ, Յունիսի 20-րդ, Սեպտեմբերի 20-րդ եւ Նոյեմբերի 20-րդ՝ Դեկտեմբերի 20-րդ:

Յօդ. Ի.— Եթէ հանդիպեսցի ինչ սխալանք, յանդիմանութիւնք կամ զանազանութիւնք ի մէջ երկուց ազգաց տէրութեանց ռուսաց եւ հայոց, առ որս խոռովութիւնք բոլորովին արգելեալ է եւ վրէժխնդրութիւնք փակեալ, պարտ լիցի երկուց կողմանց զգանդատս եւ զպատասխանիս իւրեանց ընծայել առ ի ըսպաս ամենայն փառաց արժանի կայսերն Հոռովմայ այսինքն Գերմանիոյ, եւ ի վերայ որոց ի նմանէ լեալ վճիռն լինի երկուց կողմանց արդարութիւն: Արդ, եթէ հաճոյ թուեսցի կամաց Հայրապետին եւ տանուտէրանց հայոց, յայսմանէ տպեսցի երկու հարիւր հատ. յամի Տեառն 1779\*):

8.

Թէ հայերը ո՞րքան ոգեւորուած էին Հայաստանի ազատութեան ծրագրով, դա երեւում է նաեւ Արղութեանի յիշատակարանից, որ տըպագրուած է «Կոունկ Հայոց Աշխարհին» հանդէսի 1863 թ. 4, 5, 6, 7, եւ 8 թիւերում:

Սրբազանը գրում է. «1 Յունուարի 1780 ամի. ինձ մօտ եկաւ Յ. Պ. Գօրիչն եւ Կասպեան գաւառները նուաճելու համար դէպի Պարսկաստան ձեռնարկուելիք արշաւանքի լուրը հաղորդեց: Հարցրեց, թէ քաղաքներն ի՞նչ հեռաւորութիւն ունեն իրարից, թէ ո՞րքան հայոց եւ մահմեդական զօրք կայ Դերբենդից ու Գիլանից մինչեւ Թաւրիզ եւ այնտեղից մինչեւ Ղարաբաղ ու Շիրվան: Ինչ որ գիտէի՝ ասացի, եւ նա արձանագրեց:

«2 Յունուարին մեզ այցելեց գեներալ-պօրուչիկ Ա. Վ. Սուվորովը: Նա էլ միեւնոյն խնդրի մասին շատ հարցեր առաջարկեց: Հանգամանօրէն տեղեկութիւն խնդրեց Արարատեան Մայր Աթոռի վիճակի մասին եւ մեծամեծ

\*) «Դիւան Հայոց Պատմ.» Դ., եր. 731, Լէօ՝ «Հայոց Հարցի Վաւերագրերը», եր. 21: